Արձանագրություն N 8

ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար սառնարանների և հեռուստացույցների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԱՊՁԲ-24/21 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

25 ապրիլի 2024թ.
ժամը՝ 11:00

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Լ.Լևոնյան*, Վ.Թորոսյան, Ա.Լալայան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

*նիստից բացակայում է Լևոն Լևոնյանը

1. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված հայտերի՝ /հայտում առկա փաստաթղթեր, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտերի գնահատման մասին

Նիստը վերսկսվեց 25.04.2024թ. ժամը 11:00-ին: Հանձնաժողովն արձանագրեց, որ ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունները:

Հանձնաժողովը որոշեց՝ Ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ի և Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրերի կնքման վերաբերյալ

25.04.2024թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

2.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ՆԱՌ-ԱՎ ՍՊԸ-ին Ընթացակարգի 1-ին չափաբաժնով և ՎԻԷԼՎԻ ՍԵՆԹՐ ՍՊԸ-ին Ընթացակարգի 2-րդ չափաբաժնով հայտարարել ընտրված մասնակիցներ, իսկ Ընթացակարգի մյուս մասնակիցների հայտերը մերժել:

2.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

2.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

2.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Վարդան Հարությունյան

անդամներ՝ _____ Վարդան Թորոսյան

_____ Անժելա Լալայան

քարտուղար՝ _____ Հերմինե Սաղաթելյան